

ԱՐՀԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՉԵԶՈՒՔ ԳՈՏԻ



891-99

D b s z r u s
1 9 3 5

4-30

-6 NOV 2011

ԱՐԴԱԿ ՎԱՐԴԱԼԵՑԱՆ

891.99
4-30

ԿՄ

ՀԵԶՈՔ ԳՈՏԻ

103
75

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԹԵՐԵՎԱՆ

1935

08 AUG 2013

Պատ. Խմբագիր Հովհաննես Մամիցյան
Տեղ. Խմբագիր Հովհաննես
Սրբադրիչ Ս. Շահբազյան



Գ Ա Ր Թ Ը

Զյո՞ւն, ձյո՞ւն...

Խստաշունչ ձմեռն իր գերկն եր առել Լուին: Հեռվից լեռնային կածաններն իրենց կեռմաններով սեխն եյին տալիս սպիտակ ֆոնի վրա, իսկ լեռների բարձր կատարներին բազմել եր թանձր մառախուղը:

Թուրքական բանակը գրավել եր Ալեքսովլը:

Վորագես հեթանոսական խարույկներ՝ հեռուներում բոցավառվում եյին յերկաթուղային պահակատները, ճարճատյունով ընկնում եյին գյուղական հյուղերը, իսկ ձորերում՝ ծառատներն ու մացառները վառվում եյին հրաշել լեզուներով:

Կինոյի անծայր ժապավենի պես անցնում եյին լոռվա ձորերով խելակորույց պաղթողները:

Արտերն արշավող մորեխի պես՝ ձյան փաթիլներն իջնում եյին գետին ու կընկակոյն ծածկում մարդկանց անհամար հետքերը:

Շոգեքարշի յերբեմնի սուլոցներից՝ անիմաստ բառաչով խրտնում եյին ու խլչկոտում յեղներն ու կովերը, խրխնջացող ձիերը պոկլում եյին գետնից խելագար վազքով։ Յերբ ճռնչոցով սայլերի անկվները դեմ եյին առնում յերկաթգծի ռելսերին, յեղները չոռն եյին ապուշ աչքերն ու հենվում յետին վոտքերի վրա։

Խառնիճաղանձ բազմությունը գեմ եր առել մենչևիկյան Վրաստանի «Հանրապետական» սիններին։ Նա ալիք-ալիք իրար երգարնվում, հորդանալով, յերբեմն այնքան երկուտակվում, վոր յելնում եր լեռնալանջերով գեպի վեր ու փովում սարադաշտերում։

Մանահին կայարանը՝ պաշարված բերդի պես՝ տնքում եր, ալեկոծվում։ Տեղաշարժի դիմավոր հոսանքն այստեղ եր իր վոլորապտույտը կատարում։ Բազմությունը գիշերներն ավելի եր խոնվում կայարանի շուրջը։ Նա սեղմվում եր անկյուններում, կառամտույցի ճաղերի մոտ, դռների շեմքին, դուրսը՝ աստիճանների տակ, կծկվում միակ սրահի հատակին, աթոռների վրա, նստարանների ու սեղանների տակ, ամենուրեք-ամենուրեք...

Քրտինքի հոտը, մախորկայի ծռվաը, դաղլ գոլորշին թանձրանում եյին սրահում ու մթնացնում առաստաղից կախված միակ ճրադի աղոտ լույսը։

Սրահի մուտքի մոտ հազիվ եր տեղավոր-

վել Դարսի շրջանի գաղթականների փոքրիկ խումբը։

Մի քանի որ առաջ վարպետ Մինասը նորից թողեց գյուղական դարբնոցը և յերբորդ անգամ իր ձեռքն առավ գաղթականի ցուպը։ Առաջին անգամ ծննդավայրից գաղթելիս, նա այն ճանբաններում թողեց՝ կնոջը՝ Գյունարին և յերկու յերեխաններին— Ավոյին ու Մարնեյին, իսկ այս վերջին կովում՝ նաև իր միակ յեթոյին։

— Ճեյ վա՛խ, նորից ավիրվեցինք։

Մրմնջում եր վարպետ Մինասը՝ դռան շեմքին կծկված։ Նա ուսերին առել եր ամերկյան ալյուրի մի տոպրակ։ Ծխի թանձր քուլաները վեր եյին բարձրանում ու քողի պես ծածկում նրա դեմքի կնծիռները։

Կես գիշերը վաղուց եր անցել։ Յերեխաների լացն ու ճիչը, ընդուստ հեկեկանքները, նորեկների աղմուկը, սարսափի պատմություններն իրենց անվերջ հորձանուտն եյին կատարում դահլիճում։

— Ինա կեդրյան կսեն, ինչ կսեն— որ գընաց վերիթին, հեչ մեր վորպիսությունից խորար մը չեղա՞վ։

Հուսահատ հարցումները շարունակվում եյին մինչև լուս։

Դարսեցիների իսմբի մեջ միայն գյուղի ուսուցիչ Սերոբն եր, վոր շարունակ ներս ու մթնացից վերադառնալիս զանազան նորություններ եր պատմում։

— Լսել ե՞ս, վարպետ, վաղվանից կառավարությունը գաղթականության հաց պիտի բաշխի:

Վարպետ Մինասը, մեջքը թիկնած պատին, լուռ ու անտարբեր շարունակում եր ծրիխել չիբուխը: Մորթու փափախը դեմ եր ընկել նրա թավ հոնքերին, աչքերի խաղը սառել եր նրա հայացքում: Ծուխը ողակ-ողակ վեր եր բարձրանում ու պար կապում նրա գլխավերեռում:

— Վարպետ, դա լավ չի... դու վոչ մի բանի չես հավատում,— շշնջաց ինքն իրեն Սերոբը և դժկամությամբ սեղմվեց հայրենակիցների շարքում:

Լուրը վայրկյանի արագությամբ բերնից-բերան անցավ. սրահն յերերաց:

— Ամա՞ն, ոտացդ պաքնեմ, շխտա՞կ:

Բազմությունը խոնվել եր Սերոբի շուրջը. կանայք համեստորեն գլուխները կախել եյին ու տղամարդկանց ուսերի արանքից նայում եյին հուսաբեկ հայացքով:

— Վարժապետ, եղ ո՞վ ասաց:

Սերոբի դեմքը փայլում եր անբավ հաճույքից. փոքրիկ ակնոցների միջից նրա աշքերը խաղում եյին հաղթության զգացումով:

— Հենց նոր իմացա տղաներից. վճիռը կայացրել ե Մեկուսի կոմիտեն:

Անծանոթ բառը կրկնվեց ու անցավ շարքից շարք:

— Վարժապետ, եղ «մեկուսեյ» ասածդ ո՞վ ե, ամերկոմի լիազորը, հա՞:

Սերոբն աչքերը խոժուեց ու դեմքին արտասովոր լրջություն տալով, հպարտորեն կրկնեց:

— Հասկացեք, տիմարներ, մեր Լոռվա կուսակցական կոմիտեն:

Բազմությունը լուռ ու հուսաբեկ ցրվեց յուր տեղերը. այլևս նոր հարցեր չտրվեցին: Վարպետ Մինասը միայն շշնջաց:

— Քամի ե'...

Սերոբի պնչերը հանկարծ լայնացան, նրա ստորին շրթունքն ավելի կախվեց:

— Զասացի՞՝, վարպետ,— բացականչեց յայրությով Սերոբը, — վոր դու վոչ մի բանի չես հավատում:

Նա բարկացկոտ հայացքը մի պահ պտտեց բազմության վրա ու կարծ ընդհատումից հետո ձայնն ավելի բարձրացրեց:

— Լա՛վ, կտեսնեք, յերբ վաղը սպիտակ հացերը կրերեմ:

Սերոբի կերկերուն ձայնը յերկարորեն հնչում եր անընկնդիր սրահում, իսկ մատները խաղում եյին խունացած փողկապի հետ՝ ջղային գրգիռով:

Վարպետ Մինասն արագ վայր դրեց չիրուխը և անսպասելի կերպով աջ ձեռքը հենեղ Սերոբի ուսին:

Նա թավ հոնքերի տակից աչքերը դառնությամբ մեխեց Սերոբի դեմքին ու դողդոջուն ձայնով հարեց:

— Տղա՛ ջան, մե՞նք մեր հացն արդեն կերանք, մեզ կառավարությունը հայի տեղ արյուն հրամցրեց, ել մեզ ի՞նչ հաց...

— Հա՛ վալա՛հ, վարպետ շիտակ կսե:

Մոտակա շարքերում բացականչությունները դառնում եյին ավելի համարձակ ու հաճախակի:

Ծանր հուզմունքից՝ վարպետ Մինասի ճակատի կնծիռները խաղում եյին կոհակ-կոհակ: Նա, ամեն մի խոսքից հետո, ավելի խորներ ներշնչում մախորկայի ծուխը ու յերբեմն-յերբեմն՝ սեղմ շրթունքների արանքից՝ դուրս թողնում բերնում կիտված թուքը:

— Սո՞ւս, վարպետ,—խորհրդավոր լրջությամբ նկատեց Սերոբը, — յես իմ սեպուհպարտքն եմ համարում քեզ զգուշացնել: Տեսա՞ր, յերեկ են մարդու գլուխն ինչ դրին տղաները:

Վարպետ Մինասն այս անգամ դեմքն ավելի խոժոռեց:

— Տղա՛, սրանից ել վատ որ, ել ի՞նչ պետք ել լինի: Յեղա բնավեր, կորցրի տունտեղ... կորցրի Սեթոյիս:

Նա մի ծանր հոգոց հանեց: Արցունքի մի քանի կաթիլ ընկալ նրա ալեխառն միրուքի վրա...

Ծերունի Սահակը կծկվել եր Մինասի քուրքի մեջ ու սեղմվել նստարանի տակ: Նա սաքության մեջ յերբեմն-յերբեմն ծանր տըն-

քոցներ եր արձակում ու կոշտացած մատներով մարմինը քորում: Նա ծուլորեն գլուխը դուրս հանեց նստարանի տակից և այրվող աչքերը հարեց Մինասի վրա:

— Վարպե՛տ, ըշտե իդման խոսողներ կեղանի, վոր հայի տուն կավիրվի: Գենա մեղլի խնամող-փրկող կառավարություն ե: Իդման խոսքեր դորի՞ կը զրուցիս. իդղոնք զմմեն ողբենքին ու հավատքին դեմ բան ե, բոլշեիկի խոսք:

Վարպետ Մինասը թևքերով սրբեց աչքերն ու դառնությամբ շնչաց:

— Են չե՞ր մեր կառավարություն, վոր մեզ գցեց սար ու ձոր, ավերեց մեր տուն, մեր յերկիր...

Ծերունի Սահակը դժգոհությամբ սրորեց գլուխը:

Սերոբի դեմքը փայլում եր անչափ բավականությունից. փոքրիկ աչքերը ճպճպում եյին արտասովոր յեռանդով: Նա հանկարծ վեր ցատկեց տեղից ու հաղթական մի հայտար նետեց ընկերների վրա: Անբավ վոգեորությունից նա սկսեց բառերը մեկ առ մեկ վոգել:

— Մեր յերկրի դժբախտությունը հենց այն ե, վարպետ, վոր քեզ պես խոսողների թիւվը շատացել ե: Միթե՞ կարելի յե այդքան ապերախտ գտնվել դեպի մեր կառավարությունն ու նրա պանծալի կուսակցությունը: Նա՛, վոր ժողովրդին ազատագրեց դարավոր ստրկությունից, նա՛, վոր ստեղծեց մեր յեր-

Կրի անկախությունը — մեր բյուր սերունդների յերազը։ Այդպես կարող են խոսել և այդպես խոսում են միայն ազգադավ բոլցեիկները...
— Վարժապետ, թուլցո՞ւ...

Ալեքպոլցիների հեղնական բացականչությունները յերկարորեն տարածվեցին սրահում։

Բառերը հանգան Սերոբի շուրթերին։ Նրա ճոճացող ձեռքը մնաց ողում կախված։ իսկ ծերունի Սահակը նորից կծկվեց նստարանի տակ։

Դուրսն ավելի յեր սաստկանում ձյունախառն քամին։ Նա յերբեմն հախուռն թափով ներս եր խուժում սրահի բաց դռնից ու սողոսկում անթիվ ցնցոտիների միջով դեպի մարդկանց մերկ մարմինները։

Շոգեշարժի անվերջ սուլոցները յերկարորեն արձագանքում եյին հեռուներում։
— Ո՞ւ, ո՞ւ, ո՞ւ...

Զայրույթը կապարի ծանրությամբ ճընում եր Սերոբին, հուզմունքը խեղդում նրա կոկորդը։

— Վարպետ, — անզուսապ բարկությամբ հարեց Սերոբը, — ինչպես տեսնում եմ թշնամու արհավիրքները քեզ խելքի չըերին։ դու դարձյալ շարունակում ես քո հին զուռնան փշել։ Միթե՞ կարելի յե այդչափ շուտ մոռանալ մեր կառավարության բարիքները։

Մինասը վոչինչ չպատասխանեց։ Նա հոգ-

նատանջ գլուխը միայն հենեց պատին ու աչքերը հարեց տարածության մեջ։

Սրահը մի պահ լռեց։
— Նանե՛, հաց...

Մոտակա շարքերում, փոքրիկ Վանիկը ցրտից սեղմվել եր մոր ծնկներին։ Նա վոտքերով ու ձեռքերով անհանգիստ շարժումներ երդործում։

— Յարաբ աստված, հըջըբ ի՞նչ ենիմ...

Մայրը շրջազգեստի փեշերը վեղարի պետքավին եր առել ու ցրտից կծկվել տեղում։ Նա ամոթխածությունից հազիվ եր շնչում։

— Եքվան, բալիկ ջան, եքվան...

Անհողդողդ եր Վանիկը։ Նա բարկությունից վոտքերը ավելի յեր թափահարում մոր ծնկներին ու աստիճանաբար ձայնը բարձրացնում։

— Նանե՛, հաց, նանե՛, հաց...

Մայրը շրջազգեստի փեշերով ծածկեց Վանիկի բերանը, իսկ ձախ ձեռքի մեջ առավ նրա անհանգիստ վոտքերը։

— Ա՛ռ, ա՛, ա՛...

Յերկարորեն տարածվեց Վանիկի ընդուռ հեկեկանքը։

— Ա՛ռ, քուրս։

Վարպետ Մինասը տոպրակից հանեց հացի մի կտոր ու մեկնեց Վանիկի մորը։ Վանիկը յուեց։ Նա սուր ատամները ագահաբար խրեց հացի մեջ։

— Ամմա՛ն եկան, ամմա՛ն եկան...

Սրահի վրա փովեց բոթսրեր ձայնը։ Դիմացի անկյունում՝ վերմակի մեջ կծկված մարդքը՝ զառանցում եր բարձր տաքության մեջ։

Սարսափը մի պահ քարացավ մարդկանց դեմքերին, դահլիճը լոեց։ Վարպետ Մինասը հանկարծ ծնկեց տեղում, նրա ձայնը դողովաց։

— Տե՛ս, Աերոք, ահա՞ մեր կտուավալության բարիքները...

Սերոբը ցնցվեց։

— Բավական ե, ի՞նչ եք խղճներիդ դեմ մեղանչում։ Միթե՞ չգիտեք, վոր այդ բոլորն արավ թուրքը՝ մեր դարավոր ու նենդ թրշնամին՝ ձեր սիրած բոլշևիկների ոգնությամբ...

— Բբը՝ Վրաստանի, ըբը՝ Ազրբայջանի Հետ կոիվները ո՞վ սարքեց։

Բացականչությունների մեջ խեղդվեց Աերոբի ձայնը։ Հուզմունքից նա միայն սրածայր միրուքն եր սղում ու ճպրոտ աչքերը կկոցում։

Վարպետ Մինասի ձայնը հանկարծ արձագանքեց սրահում արտասովոր զայրութով։

— Հերի՞ք ե, ել մեզ չեք խարի։ Բոլշևիկ յեղբայրություն կուզե, բոլշևիկ կոփվ չուզե... բոլշևիկ կուզե, վոր քիրվա Հասանը, կուռո Հասոն ու յեղբայր Հանեսն իրար հետ հաշտ ապրին, իրար պաշտպան լինին... Բոլշևիկ կուզե, վոր յերկրում խաղաղություն լի-

նի, յեղբայրություն ու հավասարություն լինի...

Սրահն յերկարորեն արձագանքեց։

— Շիտակ ե՛, ճիշտ ե...

Սերոբի դեմքը գունատվեց։ Նա հորդացող դայրույթը մի պահ սեղմեց շրթունքների մեջ։ Յերբ սրահը մի փոքր խաղաղվեց, նա դառնությամբ բացականչեց։

— Ահա՛, թե մինչեւ ուր կարող ե համել մի յերկրի ու ժողովրդի բարոյալքումն ու այլասերումն...

Հեգնական բացականչությունների միջից, նրա ձայնը շարունակում եր հնչել կատաղի հառաչով։

— Ստրուկնե՛ր, ոայանե՛ր։ Միթե՞ չգիտեք, վոր կառավարությունն այդ բոլորն անում եր յերկրի թիկունքն ապահովելու համար։ Մինչեւ յե՞րբ մեր Տարոնը, մեր Վասմարը Միթե՞ մեր Սիփանն ու Տալվորիկը գերի պուրականը, մեր Մինասը մեր Սիփանն ու Ճեռքին։ Վերջապես պետք է՞ր լուծվեր մեր դարավոր յերազը, թե վո՞չ...

Մոտակա շարքերում նոտաղներից մեկը մոտեցավ վարպետ Մինասին ու խնդրեց ծխախոտը կպցնել։ Չիբուխը հանգել եր։ Մինասը հանեց գրպանից լուցկին ու կպցրեց, թե նրա ծխախոտը և թե իր չիբուխը։ Անծանոթ մարդը չորհակալություն հայտնեց ու լոելցան դուրս յեկավ դահլիճից։

Վարպետ Մինասն իրար յետեկից մի քանի

անգամ ծխեց չիբուխն ու նախկին դառնությամբ շարունակեց:

— Եֆֆերիմ, Սերոբ, եֆֆերիմ, ասատեսնեմ, ո՞ւր մնաց քո Վասպուրականը, քո Սիփանը:

— Վարպետ, ըբը՝ ծովից-ծով Հայաստանը, — վրա բերեց հույնալիսի դառնությամբ Համադյուղացի Միսակը:

Անհուսությունը նորից թանձրացավ Աերոբի հայացքում:

— Սպասեցեք մի քիչ՝ դուսպ զայրութով շնչաց Սերոբը՝ մենք ձեզ հետ հաշվի կնստենք: Մեր դաշնակից անգլիացիք արդեն սաստել են թուրքերին և վաղվանից գաղթականությունը յերկիր պիտի քաշվի:

Վարպետ Մինասի մարմնով մի սուր կոկիծ անցավ, նա հանկարծ վայր դրեց չիբուխն ու յերիտասարդական արիությամբ նորից ծնկեց տեղում:

— Տղա Սերոբ, միթե՝ չես տեսնում, վոր ժողովուրդ ձեռքից ելավ եղ անորենների պատճառով. ի՞նչ ինգիպ, ի՞նչ Փրանդ...

Նա պահ մի լոեց: Նրա կոշտացած մատները ջղային ցնցումներով խաղում եյին ալեխառն մորուքի հետ, իսկ յերերփող շրթունքների արանքից՝ նշմարվում եյին նրա առջևի գործունեղնավուն ատամները:

— Ոո՛ւտ ե, սո՛ւտ ե. մեղ փրկողն ելի են ոուս բոլշևիկն ելինելու, են լեզրյանը...

Նրա ձայնը հնչում եր ընդուստ ու բեկել:

Սրահը յերերաց. ցնծագին աղաղակներն անցան շարքից շարք:

— Հերիք վնդստաս, քյափթառ չուն:

Վարպետ Մինասը, յերբ զգաց իր ուսին րոռնցքի հարվածն, անմիջապես աչքերը վեր բարձրացրեց: Նա իր գլխավերեւում տեսավ միլիցիոներների խումբը և նրանց շարքում նաև ծխախոտը կպցնող տղային:

— Ի՞նչ եք ուզում, — հարցրեց զայրույթով վարպետ Մինասը:

— Դե՛հ, յել, չուլ ու փալասդ հավաքիր դնանք:

— Ո՞ւր:

— Շուտով կիմանաս:

Վարպետ Մինասի աչքերը դառնության թախիծով ընկան Սերոբի դեմքին:

— Տեսնում ե՞ս, Սերոբ, ահա ձեր արդարությունը:

— Ձա՛յնդ, անատամ քյափթառ:

Հնչեց միլպետի հուժկու ձայնը և մտքարի ծայրը վզզոցով փաթաթվեց Մինասի ունին:

Մինասը, յերբ մի ծանր տնքոց արձակեց, մոտի տղաները վոտքի յելան ու շրջապատեցին Սերոբին:

— Վարժապետ ջան, մի թողնե, վարժապետ...

Սերոբը լուռ ու անտարբեր դիտում եր հայրենակիցների սարսափահար դեմքերը:

— Սերո՛բ, ազա, Սերո՛բ...
 Ծերունի Ստհակի ձայնի վրա միայն Սե-
 րոբը պատասխանեց:
 — Ի՞նչ ե, քեռի:
 — Տղա, աստծո սիրուն, մի թողնե:
 — Թող տանեն, նրա տեղն ե— գոչեց Սե-
 րոբը բարկությամբ:
 — Ծո տղա՛, վոտքդ պաքնեմ, ուեշություն
 մի ընե, մեր վարպետն ե, մի թողնե:
 — Գեշություն,— շնչաց հեղնանքով Սերո-
 բը:
 — Տղա՛, գիտես, վոր ենոր սրտեն արյուն
 կկաթե, դորի՞ չըս հասկընա:

Սերոբը լուց: Նա հիշեց, վոր առաջին
 կամավորական խումբն իրենց շրջանում ինքն
 իազմեց գյուղի տղաներից: Նա այն ել հիշեց,
 վոր Սեթոն՝ վերջին հրաժեշտ տալիս՝ համ-
 բուրեց իրեն ճակատն ու արցունքու աչքերով
 խնդրեց «անտեր չթողնել ու պաշտպան լինել
 ծերունի հորը»: Նա յերդվեց կուսակցության
 գրոշով, նա խոստացավ այդ... նա խոստացավ
 նաև նրանց հետքից գնալ, բայց...

— Լա՛վ, քեռի,— կմկմաց ամոթիսածու-
 թյամբ Սերոբն ու անվատահ կերպով քայլերն
 ուղղեց դեպի միլպետը:

— Պարո՛ն միլպետ, ի՞նչ եք ուղում այս
 մարդուց:

— Քեզ ինչ, դու ո՞վ ես:

— Յե՞ս,— պատասխանեց սրտնեղությամբ
 Սերոբը,— յես խնդրում եմ՝ այս ուշ գիշերին

սրան հանգիստ թողնել: Ամբողջ պատասխա-
 նատվությունը վերցնում եմ ինձ վրա:
 — Չա՛յնդ փոլինքու— պատասխանեց միլ-
 պետը մտրակը շարժելով նրա վրա:
 — Ինչպի՞ս եք համարձակվում ինձ լեռ-
 նալանջի յենթակոմիտեյի անդամիս հետ այդ-
 պես վարչել: Յես վաղը ձեզ ցույց կտամ, —
 պատասխանեց Սերոբը, վիրավորանքից ու
 զայրութից ձայնն ավելի բարձրացնելով:
 Սրահի բազմությունն ու համագյուղացի-
 ների խումբը վաղուց եր իր շրջանն առել վաշ-
 պետ Մինասին:

Նա աչքերը կախել եր գետին և զայրույ-
 թից միայն շուրթերն եր կծում:

— Հա՛, հա՛, հա՛, դու եյիր պակաս, քնձ-
 րուտ, վոր կուսակցության անունից խոսեյիր:

Քրքջաց միլպետը և նորից մտրակը շար-
 ժեց Սերոբի վրա:

— Հը, վարժապետ, եդ ինչը՞ս ե, կոմիտեդ
 բանի տեղ չի անցնի՞:

Միսակի զարմանքն ավելի զայրացրեց Սե-
 րոբին: Նրա ձայնը տարածվեց անզուսպ կա-
 տապությամբ:

— Սա ուղղակի լրբություն ե. յես խնդիրը
 մինչեւ Արևելյան բյո՛ւռոս կհասցնեմ:

Սրահում բարձրացած աղմուկն ու իրա-
 բանցումն անլավելի զարձրին Սերոբի վերջին
 բառերը:

Իրար խառնվեցին քնաթաթախ ձեռքեր ու
 վոտքեր:



Յերբ յերբորդ անդամ հարվածն իջավ Միւնասիթիկունքին, նրա աչքերն արնակալվեցին, ձզվեցին պիրկ մկաններն ու կոշտացած մասները սեղմ վեցին բոռնցքների մեջ:

Նրա ձայնը գողղողաց:

— Անիրավներ, ձեր վերջն յեկել ե. ձեր գիվանը շատ շուտ կըլինի... Տեսե՛ք գալիս ե՞ն մեր բոլշևիկ յեղբայրներ: Թո՛ղ կանեն ձեզ, թո՛ղ...

Ճռճռացին նստարաններն ու սեղանները: Գազագած բազմությունն ավելի սեղմեց իր շարքերի մեջ վարպետ Մինասին ու փակեց գեպի գահին տանող մուտքը:

Ողը դղրդաց ցասումի աղաղակներով «բաժական ե՛, հերիք ե...»:

Շարժվեցին հրացանի կոթերն ու մտրակները: Սկսվեց մի վայրի բզիսոց ու քաշկրտոց: Մրահը ցնցվեց: Մարդկային ալիքը աննկատելիորեն գուրս նետեց Մինասին՝ սրահի հորձանուտից. նա անհայտացավ գիշերվա մթություն մեջ:

— Դեպի՛ հետ, սրիկաներ, դեպի՛ ձեր վորչերը...

Գոռոում եր գռան շեմքից միլպետը, մլուրակը շարժելով անթիվ դեմքերի, դլուխների ու յերեսների վրա:

Փոքը անց միլիցիոնները կատաղի հորնդոցով գուրս թռան սրահի հետին դռնից:

Մրահը խաղաղվեց:

Բազմության վրա նորից փուլեց զառանցումարդու ձայնը:

— Ամմա՛ն եկան, ամմա՛ն եկան...

Դիմացի շարքում բարձրացավ կանացի մի աղեկտուր կական: Վերջին ջղաձգությամբ մարդը ձգեց վոտքերն ու հավիտենապես դաշտարեց չնչելուց:

Բազմությունը լոեց:

Հեռու լեռների կատարներն արդեն նշմարվում եյին: Վերը, կատամատույցում շողեքարչերի զիլ սուլոցները յերկարորեն արձագանքում եյին ձորեկում:

— Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ...

Լուսանում եր:

— Արա՛, ես բայդաղն ընչի՞ համար ու
դուքանի ճակատին կըպցրած— զարմացած
իրար եյին հարցնում գյուղացիները:

Վերջին որերը՝ «Սաբակն» իր տան մի մա-
սըն իրոք հյուրանոցի յեր վերածել և պատըշ-
դամբի ճակատին փակցրել մի մեծ ցուցանակ:

«Ապաստարան»

Հյուրանոց—ճաշարան
Յեղոր Գարսեվանիչ Գրիգորով:

— Տղե՛րք, ես ի՞նչ ողբաթ ա, ոյ ձեր ջա-
նին մատաղ, հըլա մի տեսեք, ես փչացածը
հիմիկս ել գաղթականնու կաշին տի մաշկի:

Այսպես եյին վորակում գյուղացիները՝
Յեղորի տան մեջ առաջացած փոխոխության
պատճառը:

Սաբակը շատ սակավախոս մարդ եր: Նա
չեր սիրում «մուշտարիների հետ յերկար չանա-
թակել»:

— Այ տղա՛, եղ ի՞նչ ես ասում, հոր խեյրի
չո՞չ չի:

Ամեն անգամ նա մի առանձին շեշտ եր
դնում այս վերջին բառի վրա ու սրտնեղած-
չարունակում:

— Այ գյաղա, հո քու յեղնա միխակած-
ինձոր չեմ դարկել. ուզում չե՞ս— քեզ հառաջ-
բարի:

Սաբակն այլես ավելացնելու բան չուներ:
Նա, կամ աչքերն եր ավելի ճպճպացնում, կամ

Ս Ա Բ Ա Կ Ը

Կայարանից կես կիլոմետր հեռու—յերեք
ուղիների ճամբաժանում, այստեղ, ուր Սեղվի-
ջուրը չարածճի աղմուկով խառնվում է Դեբե-
դին, դանվում եր Գիշոյանց Յեղորի միակ
մասնավոր տունը:

Այն տարիներին, յերբ «առուտուրի խելն
ու բարաքյաթը կտրվեց»— ըստ ասության
Յեղորի, յերբ ըրջանում շատ հաճախ անհնար
եր լինում քարաղ, կամ վառելանյութ գտնելը,
կամ թե «ամերկա» ճարելը, այդ բոլորը մըշ-
տապես կարելի յեր գնել Յեղորի խանութից:

Հոգ չե, թե մի փութ քարաղն արժենար
յերկու փութ վոչխարի անքաշ պանիր, յերկու
դրվանքա նալիթը, կամ մի արշին «ամերկան»
մի դրվանքա կովի յուղ:

Շրջանում շատ քչերն եյին հիշում Յեղորի
խական անունը: Բոլորը նրան «Սաբակ» ա-
նունով եյին ճանաչում: Այդ պատճառով ել
նրա խանութը կոչվում եր «Սաբակի դուքան»:

Նրա տան ներքին մասում դտնվում եր խա-
նութը, իսկ վերին հարկում՝ բնակարանը:

գեղի վեր ճախրող բեխերը մի քանի անգամ
վոլորում:

Գաղթականների բազմությունը վաղ առա-
վոտից ձըջապատել եր Սարակի խանութը:
Խնսովոր աղմուկը, իրար կոխկրտոցը՝ հեռվից
իսկ ազդաբարում եյին որի առևտորի սկիզբը:
Փոնից դուրս յեկող կիսաեփ ու տաք
հացերն անմիջապես անհայտանում եյին գնորդ
ների միջև:

Սարակը «դախլի» մոտ կանգնած միայն
փող եր հաշվում և այս ու այն կարգադրու-
թյունն անում գործակատարներին:

— Քեռի՛, ի՞նչ արժե հացի գրվանքան:

Անրնդհատ ու իրար հետեւից հարցնում ե-
յին հաճախորդները:

— Հիսուն մանեթ, հիսուն մանեթ վրա-
ցական բոներով, — ձանձրալի միակերպու-
թյամբ կրկնում եր Սարակը բոլորին:

— Քեռի՛, չեկոյ հացն ի՞նչ արժի:

Այդպիսի դեպքերում Սարակը կամ վո-
չինչ չեր պատախանում, կամ միայն մի ար-
համարհական ժպիտ եր ուղղում դեպի նորեկը
և շարունակում իր սովորական հարցումը:

— Յեղո՛, ձեզ ինչ զդամ հաց ա՞պետք:

— Քեռի՛, սա մեկ դուլարին հաց տվեք:

Ամերիկահայ յերիտասարդի մեկը լույ-
դուլարը մեկնեց Սարակին:

— Արա՛ Հակոբ, ես մարդուն հինգ գրվան-
քա հաց քաշի:

Բացառիկ սիրալիրությամբ ժայտաց Սա-
րակը: Նա քիչ տակ շնչաց «Վաշինգտոն»
բառը և զդուչորեն դուլարը գրեց թղթապա-
նակում:

— Քեռի՛, մի քիչ հաց աստծո՛ սիրուն մի
վողորմություն...

Եերբ մուրացկանների դիմումներն անտառ-
նելի ձանձրույթ եյին պատճառում, կամ խան-
գարում առեւտրի «կանոնավոր» ընթացքը, Սա-
րակը խոժոռում եր աչքերը և սրտնեղած բա-
ցականնչում:

— Դե՛հ, ուադ ըլլեք, չան լակոտնի:

Հաց գնելու հերթը հասել եր Շորագյացի
Մարիամին:

Լաթերով կարկատած չթի հնամաչ ձըջակ-
շեաւը հազիկ եր ծածկում նրա մարմինը: Մա-
րիամի աչքերն ավելի եյին փոս ընկել, ինչ
կոսկերի տակ՝ պարզ նշմարվում եյին կապտա-
վուն շրջագծերը:

— Քեռի ջա՛ն, աստծու սիրուն, բա ի՞նչ
անեմ, չեկից գյուման ուրիշ փող չունեմ:

Շնչաց Մարիամը և ամոթխածությամբ
դրոխը կախեց:

— Զե՛կ, — հեղնանքով և կիսաբարկությամբ
պատասխանեց Սարակը, — բատի առաւտուրի
տեղ ա, ըստի զիրիլանց չի:

Նաստիք բեխերը մի քանի անդամ վու-
լուեց ու բարկությամբ մըթմըթաց:

— Այսու, բա ըսենց ել ողբաթ կըլի, վոր
թողում չեն մարդու իրա գործը տենու:

Կինը հուսահատ աչքերը հարեց զետին,
իսկ մտա կանգնած մարդը զայրույթով բացա-
կանչեց.

— Թո՛ւ, յես քու հայ ասողին...
— Հի՞, հի՞, հի՞...

Սարակի դեմքն ինքնարակ ծիծաղեց լայ-
նացափ:

— Անամո՛ւթ, — կըկնեց նույն մարդը:

Սարակը կարծես չլսեց, կամ չլսելու տվեց
արձակած վիրավորանքը: Նա դեմքին անսովոր
որջություն տալով, զարմանալի սառնությամբ
շարունակեց:

— Թե իմ սիրուն ազգի հըմար ցալում չի,
բա ըստի ի՞նչ բանի յեմ: Բա տեսում չե՞ք,
վոր կառավարութինը, վոր կառավարութին ա,
իարըմ չի իր տեղովը ես ժողովրդին հաց
հասցնի: Յես իմ տուկատ հալովը՝ ըստիան-
ընդիան հաց եմ իրուց անթամ ու ձեզ գոհաց-
ում: Բա ելի՞ չնորհակալ չեք:

— Շատ ենք չնորհակալ, ավազակ:

Սարակը նորից չլսելու տվեց արձակած
վիրավորանքն ու նախկին սառնարտությամբ
շարունակեց:

— Բա տեսնում չե՞ք, վոր իմ թայդաշ տը-
ղերքը չիմ դրադ են քաշվել ու մեյդանումը մե-

նակ յես եմ մնացել: Վա՛յ իմ շաշ հալին, վոր
ձեր թավուրներին լավութին ա անում:

— Դե վոր եղքան ազգասեր մարդ ես ու
ձեր չըջանում միակն ես, — կրկին վրա բերեց
նույն մարդը, — ինչո՞ւ չես հացը ծրի բաժա-
նում, կամ մի քիչ խղճմտանքով ծախում:

Նման հարցումներ Սարակն ամեն որ եր
լսում: Նա այդ բոլորին այնքան եր ընտելա-
ցել, վոր առանց վրդովմունքի կրկնեց նախո-
սոք սերտած պատասխանը:

— Եղ իի՞, քո հորն ողորմի, քելեխ ա՞:
Չըլի կարծում ես թե ես չիմ կարողութինս
քուչումն եմ դտել:

Նա հանկարծ ձայնն ավելի բարձրացրեց.
Ճեռքը դրեց ճակատին ու առանձին շեշտումով
շարունակեց:

— Ականջնիդ լեն բաց արա, ա՛յ դամակ.
Ես չիմ, ինչ տեսնում ես, իմ ես հալալ քրտին-
քովն ա աշխատած ե, ես հալալ քրտինքով:

Նա այլևս չերկարացրեց վեճն ու իր սո-
վորական հարցումն արափ:

— Յեղո՞ւ, ձեզ ինչ զըդա՞մ հաց ա պետք:

Յերկար սպասելուց հետո՝ Մարիամը շո-
րերի անթիվ ծալքերի միջից հանեց վոսկե մի
դրամ ու անհամարձակ մեկնեց Սարակին:

— Քեռի՛, աստծո սիրուն, զոնյա եսոր
հաց տուր, շիտակ յերկու որ ա հաղի նշխարք
չենք դրել բերաններս:

Սարակը մեջիդին ձեռքի մեջ մի քանի
անդամ շուռմուռ տվեց ու մի քանի անդամ ել

զբնգացրեց սեղանին. նա անսովոր յեռանդով կարգադրեց:

— Արա! Հակոբ, ես կնդան տասը գրվանք հաց քաշի:

Մարիամը հաղիվ զսպեց արցունքներն ու կամացուկ շնչաց:

— Քեռի՛, բա՞ մենակ տասը գրվանքա:

Սարակն ըրխկոցով փակեց «դախլը», հետո ձեռքին առավ առջեռմ դրված համրիչն ու ամբողջ ուժով մեկ շպրտեց սեղանին:

— Դե՛հ արի ու եսպեսներին լավութին առա:

Սարակը նախ խոսքն ուղղեց խանութում կիտված բազմությանն, ապա դառնալով անկյունում կծկված կինը, անզուսալ կատաղությամբ բացականչեց:

— Այս կնիկ, բա տեսնում չե՞ս, վոր մեղիդիեն կանթած ա, վոսկու մեջքը կոտրել ես ու հիմիկո ել ավել պակաս գլխիցդ դուրս ես տալի:

Սարակի այդչափ բարկությունն այնքան եր անսովոր, վոր անդամ խանութի ծառայողները՝ գործը թողած՝ զարմանքով մեկ իրենց դործատիրոջ ելին նայում ու մեկ ել անկյունում կծկված կնոջը:

Մարիամը ծանր հառաչեց ու հաղիվ կարողացավ հենվել խանութի սեղանին: Նա սովորականից ավելի կծկվեց ու լուս քարացավ տեղում:

— Առ, քիրա:

Հակոբը տաք հացերը շատապով դրեց կնոջ ձեռքը և արագ-արագ ավելյացրեց:

— Առ, ես կտորին ել քի փեշքեց:

Կնոջ աչքերը թաց յեղան ու խեղդող արցունքների միջից նա հաղիվ շնչաց:

— Պահիս վո՞սկին...

Նա լուս քայլերն ուղղեց վեպի գուրս. զուան չեմքից նա ցնցողաբար բացականչեց:

— Յարաբ ձեր դիմանը, յե՞րբ պիտի ըլի:

Կնոջ հետքից խանութի բազմությունը երկարորեն արձագանքեց:

— Շուտով՝, քիրա ջան, շուտով՝:

Դարձյալ տոկութը շաբունակվում եր իր սովորական կարգով:

Խանութի փոքրիկ սրահը քանի գնում ավելի յեր լցվում մարդկանցով: Հաճախորդների հոսանքը ժապավենի պես ձգվել եր կայարանից մինչև խանութ:

— Քեռի՛, ինչ կըլի կովս վիկայնես, խեղճ հայվանը յերեք որ ա արափի երես չի տեհել:

Գյուղացու մեկը զիլ ձայնով դիմեց Սարակին. նա իր հարցումին անմիջապես պատասխան չստանալով, նույնպիսի անհամբերությամբ շաբունակեց:

— Համա են ել ասեմ, քեռի, վոր կաթը շատ խնուտ ա ու ինքն ել քորիմեր ա:

— Հըմի ել կո՞վ. այ հա՛րամ ըլի եսթավուր տուռուր:

Սաբակի բարկությունը զեռ ամբողջովին չեր անցել: Նա մի արագ ու զննական հայացք նետեց գյուղացու վրա ու բոլորին լսելի ձայնով շնչաց:

— Այ անտեր անեմ ևսթավուր սիրաը:

Նրա խոսակցության յեղանակն ու տոնը մի զարմանալի ճկունություն ունեցին. նա դիտեր վարպետորեն ու հարկ յեղած դեպքում և բարկանալ ու գժգոհել և նույնպիսի արագությամբ ել մեղմանալ ու փափկել:

Սաբակը չթողեց գյուղացուն յերկար սպասել. նա անմիջապես գործի անցավ:

— Այ գյաղա, վորդի ա՞ կովկ:

— Հրեն դռան սընին կապած ա:

— Լա՛վ, զաղեն, — շնչաց Սաբակն ու արագ կարգադրեց:

— Արա՛ Մացակ, հըլա մի ակը տուր, թէ ինչ թափուր զագ ա:

Մացակն ու գյուղացին շտապ դուրս յեկան խանութից:

Սաբակը նորից իր սովորական հարցումն ուղղեց:

— Հեղո, ձեղ ինչ զդամ հաց ա՞ պետք:

Փոքր անց՝ Մացակն ու գյուղացին ներս տան խանութ: Մացակն արագ մոտեցավ դորատիրոջ ու ինչ վոր բան շնչաց ականջին: Սաբակը միայն «հըմ» բառն եր մըթմրթում ու աչքերի ծայրով գաղտագողի դիտում գյուղացուն:

— Այ գյաղա, կովկ ձեռաց գնացել ա, վոչ կթու հմար ա պետք, վոչ ել մսացվի:

Գյուղացին կանգնած տեղում ցնցվեց: Սաբակի ձայնը թնդաց, վորպես ոռումբի հանկարծական պայմթյուն:

— Տեսեք մեկ ես ավագակին ինչեր ե անում:

Խանութում նորից բարձրացան զայրույթի բացականչությունները:

— Հի՛, հի՛, հի՛...

Հոհուում եր Սաբակը:

— Այ մարդ, բա դու խսկի խիղճ չունե՞ս: Յերբ բացականչություններն ավելի սաստկացան, Սաբակը սրտնեղած դիմեց բազմությանը:

— Թէ եղդդամ սրտներդ ցավում ա, ո՞վ ա ձեր աղաքը կտրում. եղ դուք ու եղ ել են մարդը, ենա կովը դուք վիկալեք:

Գյուղացու մարմնով մի սուր կսկիծ անցավ: Նա աչքերը հարեց տարածության մէջ ու մտքով անցավ: Մեկ առ մեկ նա հիշեց, թէ ինչպես Ալվանն այս գարնան ծնեց ու թէ ինչպես ամեն յերեկո հանդից վերադառնալիս՝ վողջույնի տեղ՝ նա դռան շեմքից յերկար բառաչում եր: Նա այն ել հիշեց, թէ ինչպես իր փոքրիկ Արմիկն ամեն անգամ այնքան յերկար դուրզութում ել ու խաղում փոքրիկ հորթի հետ: Իսկ այժմ... նա գաղթի ճամբին, մասառուտների միջե, հողին հանձնեց իր փոքրիկ ու սեվաչյա Արմիկին: Նա ամբողջ մարմ-

նով ցնցվեց : Նրա աչքերից գլուրիկցին արդունքի մի քանի ջինջ կաթիներ :

— Այս գյաղա, ի՞նչ ես իշացել ու գուշանի միջումը ցցվել :

Սարակի բարկացկոտ ձայնը սթափեցրեց գյուղացուն . նա աչքերը սրբեց շինելի թևքերով ու անխոռ մի կողմ քաշվեց :

Սարակը զարմանքով հարցըրեց :

— Ղաղեն, թե տեղդ շատ նեղ ա, կուղեակացի հախումը կովիդ մի փութ Բորչալի սպիտակ գարի տամ, տար կեր, թե չե զրտ միուր ուտիվիւ չի :

Փոքր անց Սարակը դառավ դեպի խանութի բաղմությունը :

— Այս անտեր անեմ եսթավուր սիրար դեհ արի ու ես բոլորին դիմացի...

Մի վարկյան և խանութում ամեն ինչ իրար անցավ :

— Տո՛ յես քու Սարակի . . .

Գյուղացու ձայնը թնդաց արտասովոր դայրութով : Ծանր մահակն ողի մեջ մի ժտանգավոր շարժում կատարեց : Զընդաց խանութի առաստաղից կախված մէակ լամպը և աղմուկով թափվեց գետին :

Սարակն անմիջապես փակեց «Իտախլը» և անզուսպ կատաղությամբ գոռաց :

— Արա՛ Հակոբ, արա՛ Մացակ, բայ մեռած եք, վոր գաղթականնին մեղ վրա ճեռք քաշին : Տո՞ դրանց դեսր դրիդի ինչն առանձին անունում :

Եղ խի՞ չեր են անհամուս թուրքը գրանց տակուահան անում, վոր դեսը չգեյին :

Մացակը վայրկյանի արագությամբ դուրս թռավ խանգաթից ու տան պատշգամբից սկսեց բարձրածայն կանչել :

— Միլիցիա՛, միլիցիա՛ . . .

— Թողե՛ք մի յես դրա . . .

Գյուղացին մահակը ճեռքին նորից շարժվեց դեպի Սարակը :

Կշռաքարի մի հաջող հարվածով Սարակը գյուղացուն ուշաթափ վայր դցեց գետին :

Ամ բոխը շարժվեց :

Բարձրացավ արտասովոր իրարանցում և բղկացոց : Սարակն ու Հակոբը շատ քիչ եյին հոգում հարվածներից պաշտպանվել : Նրանք ճեռքերն ամբողջովովին մեկնել եյին դեպի գորակներն ու աշխատում եյին արգելել հացերի ու աղբանքների թալանը :

Անչափ զայրույթից Սարակը մի դլուխ այն եր գոռում :

— Արա՛ Հակոբ, արա՛ շան վորդի, թողի մի տանեն ե . . .

Բունցքների տարափից չշմել ու գաղտղավել եր մանավանդ Սարակը : Նա խելագարի ովես անընդհատ՝ գարակների յերկարությամբ երեն այս ու այն կողմն եր նետում : Անզոր կատաղությունից նա վոչ միայն ճեռքերով ու վատքերով եր հարվածում, այլև ատամներով մրանքա թևքն ու ճեռքերը կրծուում :

Հակոբի ձայնն այլես չեր լսվում . նա՛

Համատարիմ շան պես՝ ուժասպառ ձգվել եւ՝
«դախլի» առջևում:

Սաբակը մեն-մենակ դեռ շարունակում եր
դիմագրել: Նա այս անդամ սուր ատամները
մեխել եք մի կնոջ թեքի մեջ ու յերկու ձեռքտվ
պինդ բոնել հետ խլած հացի կտորը: Կինը
մղառում եր սաստիկ ցավից:

Բոռնցքի անվերջ հարվածներն իջնում ե-
րին Սաբակի գլխին: Նա պինդ կտել եր կնոջ
թեքից ու վոչ մի կերպ ձեռքից բաց չեր թող-
նում հետ խլած հացի կտորը:

«Տղաների» ու միլիցիոներների խոռումը՝
Մացակի հետ ներս ընկալ խանութի: Մտրակ-
ների վզզոցը և հրացանի կոթերի հարվածնե-
րը բազմությունը սեղմեցին մի կողմ: Ճըո-
ճըռացին դարակները, խանութի ապակիները
զընդոցով թափվեցին գետին: Վոտքի տակ ան-
ցան մանուկներ ու կանայք: Բարձրացավ մի
վայրի խուճապ ու խելակորույս միախոռոստ:

— Տղա՛ Մւռ, — կարգադրեց խմբի ավա-
դը, — հլա մի չուտ, մեյլանից դուրս քաշի են
շան վորդու կովը:

Շատ չանցած խանութում դադարեցին ի-
րարանցումն ու քաշկրտոցը: «Տղաների» և
միլիցիոների զինված խումբն առաջն արած
տանում եր խոռվարաներին: Գլխիկոր ու
ձեռքերը մեջքին կապկապած շարքի առաջից
դնում եր կովատեր դյուղացին:

Սաբակը մեն-մենակ կանգնել եր խանութի
չեմքում:

Դարակները դատարկ ու ջարդված, ալյուրին
ու բրինձը ձյունի պես հատակին փուլած, հա-
ցի փշանքներն ու կշռաքարերը ցաք ու ցրիվ,
համրիչի ճաղերը ծռմոված ու դուրս ընկած,
«դախլը», բաց ու դատարկ ։

Սաբակի գունատ հայացքը՝ խանութի տե-
րեաթափ պատերի միջև՝ անվերջ պտույտներ
եր գործում: Յերբ նրա աչքերն ընկնում եյին
բաց «դախլին», նա կանգնած տեղում, ամեն
անդամ խելագար ցնցումներ եր գործում
ու վայրի թառանչով կրկնում:

— Արա՛, տարան ե՛, վո՛ւյ, արա, տա-
րան ե՛ . . .

ԽՄԲԱՊԵՏ ԳԵՎՈՐԸ

— Լա՛յ, լա՛յ հոգուտ մեռնիմ
Լա՛յ, լա՛յ բոյիդ մեռնիմ...

Կես գիշերին, հյուրանոցի՝ դեպի կայա-
րան նայող ապակեծածկ պատշգամբից՝ հըն-
չում եր զուռնայի զիլ ձայնը:

— Ծո՛, չալեք, չալեք, յես ձեր հոգուն
բիլա մեռնիմ:

Վոգեորում եր զուռնաչիներին ալեպքուցի
հայտնի Գեորը և ամեն անդամ խոսքի վեր-
ջում ավելացնում:

— Իդղոնք բիթուն մեզի համար մեռած-
րան եւ:

Ներքե, պատշգամի տակ և փոան չուրջը
զլուխների, վոտքերի ու ձեռքերի մի խառնա-
րան եր ներկայացնում գաղթականների այն
խումբը, վոր այլ տեղ չեր գտել գիշերելու:

— Նանի՛, մըսում եմ, ծածկի՛:

Եշնջում եր մարդկային այս մսագնդի մի
փոքրիկ մասնիկը:

Մեծ չեր Գեորի հետ քեֆ անողների խում-
բը՝ ընդամենը չորս հոգի եյին նրանք՝ ինքը
խմբապետ Գեորը, զավառական դատախաղ
Ստեփանյանը, փոխ-գնդապետ Խանֆերովը և
զավառային կոմիտեյի անդամ Հովակիը:

— Ծո՛, ուազ եղեք, իշու ձագեր:

Խմբապետ Գեորը հանկարծ տեղից մի
դատկում գործեց ու մուրացիկների խումբն
սոստիճանների վրայից հոնդոցով նետվեց ցած:

— Ես Արքերը չեն թողնի, վոր գոնե ես-
տեղ մարդ հալալ հաց ուտե:

Գեորը բարկությունից մի քանի անգամ
վոլորեց սրածայր բեխերն ու նորից նստեց տե-
ղում:

— Գեոր ջան, թող, դրանց հերն ել անի-
ֆած. ի՞նչ ես քեֆներս հարամում, — վրա բե-
րեց Հովակիը գինու բաժակը ձեռքին ճոճվե-
լով, — այս բաժակով խմենք մեր պանծալի
սոստիճառը Ռուբեն վաշայի կենացը:

— Ուռուա՛, ուռուա՛, տո՛ւշ...

Գեորի աչքերն ինքնագոհ բավականու-
թյունից ժպտում եյին, իսկ ձայնն արձագան-
քում հեռուներում:

— Չալախո՛, շալախո՛...

Համաչափ ծափերի տակ, փոխ գնդապետ
Խանֆերովը՝ գինու լի շիշը գլխին՝ պարում
էր «շալախոն»:

Թղթադրամների կապուկները՝ չեկերն ու
վրացական քոնաներն թափսում եյին զուռնա-
չիների գեմքերին ու դլուխներին:

Դանակների համատակտ զարկերից զրբնագում եյին նաև գինու շշերը, իսկ ներքեւ—պատշգամբի տակ՝ ավելի եյին սաստկանում մարդկանց տնքոցներն ու զայրույթը:

— Այ քանդվի ու բնաջինջ ըլլի ես տեսակիշխանությունը...

Գինու բաժակը ձեռքին, Գևորը հանկարծ վեր ցատկեց տեղից:

— Եքստրա խմենք մեր վերդէնի հերոս Խանֆերովի կենացը:

Նորից զուռնան նվազեց յերկարատեսությունը: Կարճ դադարից հետո Գևորը շարունակեց:

— Տղե՛րք, ես բաժակով խմենք մեր սիրելի Խանֆերովի կենացը:

Գևորի ձեռքը ճոճաց ողում. նրա ձայնն հնչեց ավելի բարձր:

— Թե ինձի կհարցնեք, մեր բանակի մեջ հեջ եսոր պես հերոս չունինք. Խանֆերովով վեղի... Տեսա՞ք, տղեն ինչի լացացրեց թուրքի մերը:

— Ուռուա՛, տռ՛ւշ...

Ծանր ու լրջախոհ վոտքի յելավ Հովակը:

— Ճի՛շտ ե, պարոնայք, այսպիսի հերոսներ մեր բանակը քիչ ունի: Սակայն և այնպես, թույլ տվեք մի ավելորդ անդամ՝ դրվագել նրա իսկական արժանիքը:

Առանձին վոգումով Հովակը շարունակեց:

— Լինել անխնա, ահա մեր նշանաբանը, մեր կուսակցության սրբազն պատգամը: Նա

յրոք հիմնահատակ ու բնաջինջ արեց թշնամուապստամբ գյուղերը, հրի ու սրի մատնեց այն բոլորը, ինչ դեմ եր յելնում մեր քաջարի բանակի հաղթական արշավին: Վեդիի հաղթանակը մի նոր դրվագ ավելացրեց մեր հերոսամարտի ու գոյամարտի պատմության մեջ: Կեցցե՛ Խանֆերովը, կեցցե՛ մեր քաջարի բանակը:

— Տռ՛ւշ-տռ՛ւշ, ուռուա՛...

Գինու թմբիրն իջել եր նրանց դեմ քերին: Քեֆ անողների ձայները աստիճանաբար խըռապուտմ եյին: Ճոճվում եյին արբշիռ գլուխներն, իսկ համբույրներն՝ ել ավելի կրկնապատկվում:

Սեղանի շուրջը տիրում եյին միայն մասնավոր խոսակցությունները:

Իրար թևախառն, սեղանի մի կողմում զրուցում եյին դատախաղ Ստեփանյանը և հոփակնդապետ Խանֆերովը. Ստեփանյանը հանգիստ չեր տալիս Խանֆերովին:

— Կոլյա՛, ճիշտն ասա, ի՞նչ արիր այնքան չալթուկն ու ցորենը: Միթե՞ այդ բոլորը ճենակ մարսեցիր:

— Քեզ պես լավ տղաների հոգուն մեռնիմ, ինչո՞ւ մենակ:

Ստանդին վոգումով Հովակը գլուխը ճոճվում եր ժամանակակցի պես, իսկ զուռնայի ձայնակցույցի պարքի պես, իսկ զուռնայի ձայնակցությամբ խմբապետ Գևորգը շարունակում էր իր խոպտ յերգը:

«Որ եղել ե, որ եղել ե, —
ձերմակ չամոն խելուել ե...»:

Հյուրանոցի ծառան շտապ մոտեցավ Գևորին ու հայտնեց.

— Պարո՞ն խմբապետ, կամիսարն ասըմ
ա— կարալ չեմ դա, չունքի ինձ մոտ ել քեզի
կա, պարլամենտի անդամնին ու Վրաստանի
կոմիսարը կշիս են. ասում ա, թե ուզում են
թող իրանք դան:

Գևորը դադարեց յերգելուց:

Դինու շշերն ու բաժակները ցնցվեցին.
Գևորի բոռնցքը զայրույթով իջավ սեղանին:
— Դե՛հ ռադ, իշշո՞ւ ճագ...

Շառագունեց Գևորը. նա արնակալած աչ
քերն պտտեց սեղանի շուրջն ու հանկարծ վեր
թռավ տեղից: Նրա ձայնը կերկերաց:

— Ինձի խմբապետ Գևոր չըսեն, թե յես
նոր հարը չանիծեմ:

Գևորը մի վայրի թառանչ արձակեց ու
բազեյի մագիլների պես ճանգերը փոեց սե-
ղանին: Սփոռոցի հետ զրնդոցով գետին թափ-
վեցին՝ բաժակները, գինու լի շշերն ու ափ-
սեները:

— Գևորդ ջա՛ն, ինձի թաղես, Գևորդ
ջա՛ն, հոգուդ սատկեմ...

Անոգուստ եր տղաների հորդորը:

Գևորի վայրի թառանչը արձագանքում եր
հեռուստերում ու ավելի սաստկացնում շների
դիշերային կաղկանձը:

Հյուրանոցի ծառան քնաթաթախ աչքերու

հառել եր Գևորին ու ապուշ կանգնել գատարկ
սեղանի առջեւ:

Ծառան հանկարծ մի անսովոր ճիչ արձա-
կեց ու կանգնած տեղում յերերաց: Գևորի
ձեռքը ճոճուաց ու ապտակի մի ուժգին հարված
իջավ նրա դեմքին:

— Գևոր ջա՛ն, Գևոր ջա՛ն:

Գևորը միայն իրենն եր կրկնում:

— Ինձ խմբապետ Գևոր չըսեն, թե յես ե-
նոր հարը չանիծեմ:

Գևորն այլևս վոչինչ չեր հիշաւմ: Նրա
կիսաբաց աչքերը և հաստ շրթունքները դող-
դողում եյին: Մառուցերի մի քանի ողալին
կրակոցի հետ, նա նորից մի թառանչ արձա-
կեց ու ծանրացած գլուխը դրեց մազուերի և
արմունկների վրա:

Ծատ չանցած, նա կրկին վեր ցատկեց տե-
ղից ու արյունակալած աչքերը պտտեց սեղանի
շուրջը:

— Ռախի, շուտ ռախի տվեք...

Գևորգը դատարկեց ողու լի շիշն առանց
աչքերը ճպելու:

— Վա՛յ, վա՛յ...

Աստիճանների վրա մի սուր ճիչ բարձրա-
ցավ: Ողու դատարկ շիշը միւրճվեց մուրացիկ-
ներից մեկի դեմքին:

— Անուշ եղավ, Գևոր ջան, անո՞ւշ: Ա-
նո՞ւշ, տո՞ւշ, տո՞ւշ...

Զուռնայի ականջ խլացնող ձայնն այս ան-
դամ թնդաց ավելի յերկար:

Ավելի համեստ եր անցնում քեփը հյուրանոցի վերջին սենյակում։ Դեմքերն ու առարկաները խարխափում եյին ծխախոտի և թիթեղյա վառարանի ծխի մեջ։ Դեպի ձորը նայող սենյակի միակ լուսամուտը քրտնել եր։ Ապակիներին քաշած հյն լրագրների վրա նստել եր ամիսների գորշությունը և դեղնությունը։ Իսկ ցերեկներն այդ թղթերի վրա նույնիսկ նցմարվում եյին ճանձերի ասեղնապտույտ հետքերը։

Նավթի հասարակ ճրագր բարակ շղթայով կախված եր առաստաղից։ Նա հաճախ ճռչվում եր, յերբ սենյակում բարձրանում եյին՝ աղմուկը գարմոշկայի ու յերգի ձայնը։ Ժանդից կերպած շղթայի վրա բազմել ե հինավորց փոչին, իսկ սարդը վաղուց հյուսել եր այնտեղ իր վոստայնը։ Թիթեղյա լուսամփոփը խանգարում եր ճրագի լույսը թափանցել այնտեղ, ուր ազատ շարժվում եր սենյակի թանձր ծուխը։

Մշտապես ճռճպող ու ճռճռան յերկու թախտերի արանքում՝ հազիվ եր տեղավորվել փոքրիկ սեղանը։ Ուտելիքներն, ափսեներն ու դինու շշերը ծածկել եյին խառնի խուռն սեղանի ամբողջ յերեսը։ Իսկ դեպի դուռը տանող սենյակի անկյունում գինու դատարկ շշերը շարվել եյին զորասյունի պես։

Վաղ յերեկոյից սկսվել եր կերուխումը, սակայն քեֆ անողների դեմքերին նկատելի չեր դինու թմբիրը։

Թախտերից մեկի վրա նստել եյին՝ լնկեր կավեյուրոյից, բանվոր Վաղարշը՝ Արմենկոմից, իսկ հանդիպակ թախտին՝ լուսու մտազբաղ՝ Լոռվա բոլշեիկյան կոմիտեյի քարտուղար Արսենը և մեքենավար Յեղիչեն։

Ամեն անգամ, յերբ դադարում եր յերգը և յոռում գարմոշկան՝ Լեռնը լրջախոհ՝ հայացքը մեխում եր գեմացիների վրա ու շարունակում խոսքը։

— Այսպես, ուրեմն, ընկերներ, ձեր առաջին ու հիմնական սխալն այն է, վոր դուք կուսակցական աշխատանքը հիմնականում կուսարինել եք զեմստովյով։

Դանդաղ ու համառորեն իջնում եյին Լեռնի բառերը. սենյակը լսում եր քարացած լոռոթյամբ։

— Զեր յերկրորդ սխալն ել այն է. վորդուք վորոշել եք Լոռում հեղաշրջում կատադրել՝ առանց հաշվի առնելու, տվյալ մոմենտը՝ տում, արտաքին քաղաքական պայմանները։ Ահա մեր հանձնաժողովի յեղրակացությունը՝ ձեր հիմնական սխալների մասին։

Լեռնը մի պահ լրեց ու սպասողական հայացքը գամեց Արսենի վրա։ Վաղարշը նստած տեղից բաղիսց լուսամուտի ապակին։

Սիսակը դռան մոտ մեկ անգամ հազար շտապ ներս մտավ սենյակ։

— Ընկեր Սիսակ, բարի յեղիր այս շշերը

վերցնել, — դիմեց Վաղարշը և հեղնանքով ավելացրեց, — միայն տես-չհարթես:

Սիսակը ժպտաց. նա զինվորականին հատուկ ճարպկությամբ յերկարածիտ կոչիկների կրունկները դիտմամբ իրար զարկեց, ապա սեղանից վերցրեց յերկու լի շիչն ու անխոս դուրս յեկավ սենյակից:

— Տե՛ս, դինու հետ շշերն ել դեն չածես: Սիսակի հետքից նախկին հեղնանքով բացականչեց Վաղարշը:

Արսենը լուռ ու մտախոհ ավելի յեր սեղմակել տեղում: Նա յեղջյուրավոր ակնոցների միջից անվերջ թարթում եր աչքերն ու ամեն անգամ դյուրագողիու մատներով սղում փոքրիկ ու սրածայր միրուքը, իսկ ամենից հաճախ ու գլխի յերկար ու ցրիվ մազերը հետ եր գցում ճակատից:

— Բայց չե՞ վոր, — առանձին շեշտով սկսեց իր խոսքը Արսենը. — Ներկայումս Հայաստանը զբաղված է Թյուրքիայի հետ պատերազմով, իսկ Վրաստանը գտնվում է բոլշևիկյան Աղըրբեջանի անմիջական հարևանության մեջ, ուրեմն յերկու կողմից ել անվտանգ է լոոին:

— Բոլորովին ել չե, — նախկին սառնությամբ շարունակեց Լևոնը — մենշևիկյան վրաստանը, ոգտվելով Հայաստանի ներկուի ճանակից, Լոռին խաղաղացնելու պատրվակով անմիջապես կղրավի այն:

— Ճի՛շտ ե, — շնչաց մեքենավար Յեղիշեն ու գլուխը կամացուկ հենեց արմունկներին:

— Ահա! թե ինչու, — շարունակեց Լևոնը, — Ենք առայժմս զբաղված ենք Աղըրբեջանում: Դլխավորապես հեղափոխական կարգն ամրացնելու և հակահեղափոխության մնացորդներն արմատախիլ անելու գործով, իսկ Հայաստանում՝ մեր ամբողջ աշխատանքը ներկայումս ընթանում է մոտակա հեղաշրջումը Կլսավորելու ուղղությամբ:

Պատշգամ բում Սիսակն յերեք անգամ հազար ու յերկու հետ ել դուռը բաղխեց:

Ուստական գարմոշկան խաղաց Յեղիշեյի ձեռքերում, իսկ Արսենը բարձրածայն պեց «Եստուց ուներ, ենդուց ուներ...» յերգը: Բուրի դեմքերին իջավ մի ակամա ժպիտ, գինուրաժակներն իրար առան չրիկոցով. իսկ Վարշականից իջամագույն բաժակը ձեռքին, դարշը վոտքի կանգնեց՝ բաժակը ձեռքին, ճոճվելով:

Սիսակը լուռ սեղմվել եր պատշգամ բից զեպի ցած տանող աստիճանների ճաղերին ու զլուկը կախել բակի մթության մեջ:

Ներքեւ բակում շարժվում եյին յերկումարդկային ստվերներ: Նրանց ձայնն աստիճանաբար մոտենում եր ու ավելի լսելի դառնում: — Սուս, լսո՞ւմ ես, — շնչաց նրանցից առաջինը:

— «Մեծ մաման» են յերգում, Ղուկաս, — պատասխանեց յերկըրդը:

— Բոլորովին հավատաւ չի գալիս, վորայդ սրբկաները ժողովը հյուրանոցում նշանակած լինեն:

— Յես ել եմ կարծում: Մեր Սիսակը քիչ
առաջ լուր բերեց, վոր հյուրանոցում կասկու-
թելի մարդիկ չկան:

— Յես միայն այսքան կասեմ, — շշնջաց նո-
րից առաջինը, — ու թե կուզես գրագ ե ել կր-
գամ, վոր եղ անպիտաններն ես անզամ ել գլո-
խըներիս ոյին են խաղացել և խկապես ժողո-
վը նշանակել Ուզունլարում:

— Այս տղա, — պատասխանեց յերկրորդը, —
բա Հո հիմար չե՞ն, վոր հյուրանոցում ժողով
նշանակեն. դա խկի խելքի մոտ բան ե:

Հեռու մթության մեջ յերկարութեն տա-
րածվեց սուլոցի ձայնը:

— Դե՛հ, գնանք, մեզ են կանչում. սատա-
նայական բան ե, ո՞վ դիտե, թերեւ հետքը
դտնվել ե:

— Ղուկաս, բա Սիսակին ձայն չտա՞նք:

— Զի՞ ուզի, թող մնա այստեղ, կարող ե
միլպետը բարկանալ:

Սիսակը պատուհանի տակ նորից մեկ ան-
գամ հազար ու յերկու անգամ ել բաղխեց լու-
սամուտի ապակին:

Դաղարեց գարմոշկան և լռեց «մամայի»
յերգը:

Կարճ լոռությունից հետո Լևոնը շարունա-
կեց:

— Փոխանակ կուսակցական ղեկավարու-
թյունը գյուղքջներում ուժեղացնելու և
գաղթականության տարերային շարժումը
հեղափոխական հունի մեջ դնելու...

— Վրա փոխարեն, — վրա բերեց զայրուց-
թով Վաղարշը, — վերջերքս պրավալը պրա-
վալի հետևից է տեղի ունենում: Հազիկ եյինք
կարգի բերել «Լոռվա Գյուղացիական Ձայնի»
աւարածումը — խայտառակ կերպով տապալե-
ցին, իսկ Ուզունլարի բջիջը՝ յերիկ միայն
ամբողջ կազմով ձերբակալվեց:

Ծանը հուզմունքից դողում եր Աբսենի ստո-
քին շրթունքը. յերկար մազերն ընկել եյին նրա
հակատին՝ անկարգ ու խըրիվ:

— Ճի՞շտ ե ձեր նկատողությունը, — պա-
տասխանեց Արսենը դողդով ձայնով, — մեց
վերջին անհաջողությունների մասին:

Նրա ձայնն աննկատելիորեն ու աստիճա-
նաբար բարկության եր փոխվում:

— Սակայն թույլ տովեք ասել, վոր մեր
կոմիտեն՝ գեմստվոյի աշխատանքների նկատ-
մամբ ձեր տեսակետը չի բաժանում:

Դիմագծերի անհանգիստ խաղը ցույց եր
տալիս Արսենի անչափ գրգռվածությունը:

— Մի՞ք մոռանա, — կարճ դադարից հետո
Արսենը շարունակեց նախկին գրգիռով, — վոր
նույն գեմստվոն, վորի մասին դուք այնքան
թյուր կարծիք ունիք, հենց նույն զեմստվոն
եր, վոր իր վերջին համագումարում ընտրեց
իր, վոր իր վերջին կոմիտե՝ շրջանի բոլոր հե-
կուվա գործադիր կոմիտե՝ շրջանի բոլոր հե-
կուվա գործադիր կոմիտե՝ շրջանի բոլոր հե-

գափոխական տարբերից և վորոշում հանեց՝

դադումի վորոշումը:

Արսենը ծոցից հանեց արձանագրության քերթը և լուռ մեկնեց Լեռնին:

Դուռն առանց նախազգուշացման բացվեց ու ներս մտավ հյուրանոցի ծառան:

Շփոթված դեմքերը գետին առան, իսկ Արսենի ձեռքը մնաց անչարժ ու սեղանին հեռած:

— Աղա, ե՞լի գինի բերեմ:

Ծառան մի խուզարկու հայացք գցեց սեղանի չուրջն ու աչքերը մեխեց արձանագրության վրա:

— Բե՛ր, — կարգադրեց Վաղարշը զայրույթով:

— Աղա, ելի՛ երկու բուտիլկա:

— Այո, յերկու բուտիլկա:

Ծառան հայացքը չեր հեռացնում արձանագրությունից, նրա աչքերում փայլեց տրասովոր ուրախությունը:

Լեռնը ձեռքով զգուշորեն ծածկեց արձանագրությունը. սենյակը լուռ եր:

Ծառան նորից հարցըց:

— Աղա, ելի՛ են կարմրից:

— Ասացի այո՛, եւ քանի զահլա տանես, — պատասխանեց բարկությամբ Վաղարշը՝ ձեռքերը բոռնցք դարձնելով:

— Լավ, աղա, եւ իսի յես բարկանո՞ւմ:

Ծառան լուցայն դուրս յեկավ սենյակից: Հայացքներն իրար առան խորհրդավոր ըսությամբ: Սենյակում իջավ կամկածն ու մռայլուտ վտանգի հնարավորությունը: Յեղիչը

մէր ցատկեց տեղից ու այլայլված բացականչեց:

— Ո՞ւր կորավ են անպիտան Սիսակը:

Սիսակը սենյակում արդարանում եր:

— Ներքեւ թազադան մարդու մի ստվեր երեաց, ընդի եյի մտիկ անում, բան չկա, ծառայից վախել միք, յես ըստի յեմ:

Փոքը անց, յերբ սենյակը նորից խաղաղ-չլեց: Լեռնը շարունակեց:

— Այս ժամանակ, մենք ստիպված ենք ձեր կոմիտեն ցրված համարել:

— Այդ ձեր իրավունքն ե, — դժկամությամբ չչնջաց Արսենը և նստած տեղում իրեն ավելի հավաքեց:

— Իսկ դու, Յեղի՞շ:

— Յես կողմանակից եմ կուսակցության դժին, յես յենթարկվում եմ ձեր վարոշմանը:

— Այդ դեպքում, Յեղիշ, — Հարեց Լեռնը, — նախքան նոր բարտուղարի ընտրությունը, վերջինիս պարտականությունների կատարումը քեզ ենք հանձնարարում:

Ապա դառնալով դեպի Արսենը՝ շարունակեց. — Իսկ դու, Արսեն, գործերդ հանձնիր և անմիջապես ուղերզվիր թիֆլիս՝ Կավճյուրոյի արամադրության տակ:

Սիսակը նորից բաղնեց պատուհանն, այս մագամ ավելի յերկար ու ավելի համառ:

Բոլորը վոտքի յելան: Բառերի տեղ լուռ աչքերը խոսեցին: Պատշգամբի հետին գոնից նրանք մեկիկ-մեկիկ ցած իջան ու Սեղվի տփեր:

բովածայտացան Հաղված ձորերի մթության
մեջ:

Պատշգամբի աստիճաններից Սիսակը
չնչապատռ կանչում եր:

— Բոնեցիք, բոնեցիք...

— Շուրտ ասա, ո՞ւր փախան այն սրիկա-
ները:

Պատշգամբի աստիճանների մոտ, միլակ-
տը, զայրույթից շուրթերը կրծելով, հարց-
նում եր Սիսակից:

— Հըրեն դըրա դենը...

Սիսակը ձեռքն ուղղեց մթության մեջ ու
շտապ ավելացրեց:

— Դե՛հ, յեղին, հասեք յետնիցս:

— Պատրաստ— հրամայեց միլակտը «տղա-
ներին»:

— Պարոն նաչալնիկ, յես ել դա՞մ, — շշնջաց
հյուրանոցի ծառան:

— Վոչ:

Մթության մեջ «տղաների» խումբը շարժ-
վեց դեպի Ալլահվերդի տանող յերկաթղծի
ուղղությամբ:

Հյուրանոցի պատշգամբում քեֆը դեռ շա-
րունակվում եր:

Սեղանը նորից լիքն եր գինով և բոլոր տե-
սակի ուտելիքներով. խորովածի հռան ավելի
յեր բուրում: Դադարել յիին ընդհանուր կե-
նացները: Հովակը դլուխը հենել եր կրծքին

ու ոնդերից ծանր թնչոց եր արձակում, իսկ
գեորգ չարունակում եր քթի տակ մոմուալ իր
սովորական յերգը.

«Որ եղել ե, որ եղել ե...

Խանֆերովն աջ ձեռքը դցել եր Ստեփա-
նյանի ուսին ու միալար կրկնում էք.

— Տղի տե՛ղ ե, տղի տե՛ղ. բա մեր Գեորգ
Զանդիբասարի ենքան վոսկիները մենակ
չմարսե՞ց:

Աքաղաղների անախորժ ծուղբուղուն, չների
յերկարաշունչ կաղկանձներն արձագանքում
եյին հեռուներում:

— Դե՛հ, վոր բանն եղտեղ հասավ, — նո-
նորից դիմեց Ստեփանյանին, — այժմ զու ասա
տեսնեմ. բա զու և Հովակն Աղքաբայի ենքան
թալանը մենակ չմարսեցի՞ք...

Ստեփանյանը լուս եր ու միայն գլուխն
եր շաբժում:

— Տո՛, շատ լավ ել արիք. տղի տե՛ղ ե,
տղի տե՛ղ:

Նա աչքերը հանկարծ հարեց տարածու-
թյան մեջ և ափսոսանքի խորին թախիծով բա-
րականչեց:

— Ֆանտազիա՝ Քուրզովի՛... ի՞նչ ո-
րեր եյին, Ստեփանյան. հեյ զիտի հա՛...

Զուռնաչիները փոխել եյին յերգի յեղա-
նակը և այժմ Մազմանովի դովքն եյին յեր-
գում:

«Յե՛կ, յե՛կ, յե՛կ, մեկ ել տեսնիմ...»:

Ներքեւ՝ պատշգամբի տակ՝ խոնավ գետինն
անչափ բեռնվածությունից տնքում եր: Բազ-
մությունը կծկի պես իրար եր սեղմվել:

Պատշգամբից իջնող աղոտ լուսերի հետ
ձյան փաթիլները խաղում եյին վետվետալով:
Թիթեռնաթե ձյունը դարձդարձիկ պարով իջ-
նում եր գետինու ծածկում մարդկանց մար-
մինները:

Քիչ հեռու՝ Սեղվի ջուրը ծանր վշշոցով
զարկվում եր հսկա քարաժայուերին ու չորս
կողմը փոռում իր խոնավ շունչը:

— Ախպե՛ր ջան, ի՞նչ կեղնի մէ քիչ քաշ-
վես:

Զինվորը մի վերջին ճիշ գործ դրեց ու
պղտոր աչքերը գցեց բազմության վրա: Գու-
նատ ու անշարժ նա արձանացել եր տեղում:

Միայն նուրբ ռնգերի յերեմնակի շար-
ժումները ցույց եյին տալիս, վոր նա դեռ
չնչում ե: Նա վիրավոր ձեռքը փաթաթել եր
շինելի փեշով և ամուր սեղմել կըծքին: Արնա-
քամ ցավից նրա ատամները կափեափում ե-
յին: Հանկարծ նրա աչքերը մթնեցին: Նա թո-
վագլոր վայր ընկավ գետին՝ ձյան վրա:

Բազմությունը վոչինչ չզգաց:

Լուսանում եր:

Փչում եր զուռնան տիսուր «սահարին»:

Քեֆ անողների խումբն իջել եր պատըշ-
դամբից ու ճոճվելով շարժվում եր գեղի կո-
ռամատուց:

50

Խմբապետ Գևորը գնում եր յեթի առա-
ջից. նա ձախ ձեռքով բռնել եր գինու լի-
շիչն, իսկ աջով մառվերը: Նրա յետքից խմբի
մյուս անդամները՝ թեքերն իրար ուսի զցած՝
որորալով քայլում եյին առաջ:

Հովակը հազիվ եր քարշ տալիս վոտքերը:

Թանձր մառախուղը բարձր լեռներից իջել
եր ձորերը: Այդաբացի խաղաղությունը խան-
դարում եր միայն խմբապետ Գևորի խոպոտ
ձայնը:

— Վա՛հ, վա՛հ, յես ձեր հոգուն խոտոկ
աստկեմ, եսպես ել քեֆ կեղնե՞ր, տղերք...

— Վը՛զ, վը՛զ, վը՛զ...

Մառվերի կրակոցի ձայնը ձորից ձոր եր
վաղում ու արձագանքում հեռուներում:

— Հովակի, ինձի թաղես, թե ես կենացը
չիմես, — պնդում եր Գևորը՝ գինու լի շիշ
նրան մեկնած, — գիտե՞ս ես ինչ կենաց ե, —
վոսկի կենաց, սիրուն կենաց, մեր քաջ Սեղու-
հի կենացը:

Հովակը քայլում եր անգդա և չորհիվ մի-
այն նրա, վոր ամբողջովին կախ եր ընկել ըն-
կերների թեքերից:

Անդրդվելի յեր Գևորը. նա հարբածին
